



Բնագիտության պարունության մեջ անգլիացի հանձարեղ ֆիզիկոս



Ուիլյամ Բլեյկ.

Նյուտոն: Փորագրություն:

Իսահակ Նյուտոնը այն բացառիկ դեմքերից է, որոնք առանձնանում են մշակույթում իրենց ներդրած ավանդի մեծությամբ և գիտության առաջընթացի վրա ունեցած փրական ազդեցությամբ:

Նյուտոնը ծնվել է 1642 թվականին, ծնվելիս այնքան փոքր է եղել, որ շարերը կարծում էին, որ նա երկար չի ապրի: Սակայն փոքր մահուկը, ի զարմանս բոլորի, երկար ապրեց, երբեք չհիվանդացավ:

Նա 84 փարեկանում ընդամենը մեկ ամիս էր կորցրել: Պատահի Նյուտոնը փարբերվում էր հասակակիցներից. նա անփորձ էր աղմկոտ խաղերի և զվարճանքների նկատմամբ և հետաքրքրվում էր այնպիսի աշխարհանքներով, որոնք պահանջում էին ինչ-որ գործիքների կամ մեխանիզմների սրտեղծում: Նրան մի անգամ շար հետաքրքրեց հողմաղացը: Հասկանալով նրա աշխարհանքի սկզբունքը, նա իսկույն սրտեղծեց իր սեփականը: Նա քանո ուժի փոխարենն օգտագործեց կենդանու էներգիան: Իր սարքում փորձարկեց մուկ, որը ուրելիքին հասնելու համար պետք է վեր բարձրանար և ակամա պարտեր աղացի անիվը:

Նյուտոնի բազմաթիվ գիտական հետազոտություններից իր նշանակությամբ առանձնանում է «Բնափիլիսոփայության մաթեմատիկական հիմունքները» աշխատությունը: 1687 թ. այս գրքի երևան գալը եղել է բնագիտության պարունության մեջ երբևէ կարարված թերևս ամենախոշոր իրադարձությունը: «Հիմունքները» չափազանց լայն ընդգրկումով կարարված առաջին հետազոտությունն էր, որը նվիրված էր ոչ թե մեխանիկայի որևէ առանձին հարցի, այլ մեխանիկա գիտությանն ընդհանրապես: Այն իրենից ներկայացնում էր փորձի փվյալների և փեսական

դիպարկումների մի ներդաշնակ միասնություն, ուր արտացոլված էին մե-  
խանիկայի բոլոր կարևորագույն նվաճումները: Այդ նվաճումներում Նյու-  
տոնի ներդրումը հիրավի հսկայական էր:

Նյուտոնը վախճանվել է 1727 թվականին: Նրա աճյունն ամփոփվել  
է Անգլիայի ազգային պանթեոնում: Նյուտոնի փաստանաքարին գրված  
է. «Այստեղ հանգչում է սրբ Իսահակ Նյուտոնը՝ ազնվականը, որը գրե-  
թե աստվածային բանականությամբ և մաթեմատիկայի ջստով առաջինն  
է բացատրել մոլորակների շարժումը, գիսավորների ուղին և օվկիանոս-  
ների մակընթացությունները: Նա հետազոտել է լուսային ճառագայթների  
փարբերությունները և նրանցից բխող գույների փարբեր հատկություննե-  
րը, որոնց մասին նախկինում ոչ ոք չի էլ ենթադրել: Լինելով բնության,  
հնագույն պատմության և Սուրբ Գրքի ջանասեր, իմաստուն և ճշմարիտ  
մեկնաբան՝ իր փիլիսոփայությամբ նա հաստատել է ամենագոր արար-  
չի մեծությունը, իսկ բարքով փարածել աստվածաշնչյան պարզությունը:  
Թող մահկանացուներն ուրախանան, որ գոյություն է ունեցել մարդկային  
ցեղի այսպիսի զարդը»: